# 58. ՄԱՐԳԱՐԻՏ ՇԱՐ

Կէլնի, կէլնի մեկ թագավոր. ունի մեկ տղա, որ ամենևին չուզե պսակվել, աշխարի մտնել:

Շատ մարդեր, բարեկամներ կուգյան ինոր մոտ, կզոռեն, կխնդրեն, որ պսակվի, էն ոչ մարդու չլսի: Մեկ օր սև խավ մը կբռնի, ուր ձեռնով կտանի վեր ձան կմորթի. կասի ուր չորս կողմի մարդերայ. - Քյանձ էսա խավու արյուն կարմիր, քյանձ էսա ձյուն սիվտակ, ծամերն էլ քյանձ իմ խանչալի կոթն սև քյաթայի պես աղջիկ որ կնդա՝ կառնեմ, թե չէ՝ ոչ կպսակվեմ և ոչ էլ աշխարի կմտնեմ:

Թագավորու մոտիկ մարդերայ մեկն ինոր միտքն խասկնալով կասի. - Շատ ապրես, էտա քյո ուզած աղջիկ մեյ տեղ էլ չկա, բալքի թե մեր քյաղքի պախեզպընի տուն էլնի. ինոր աղջիկ մենակ թե քյո ուզածի պես կէլնի խորոտ, կարմիր ու սիվտակ, ծամերն էլ թուխ-մուխ՝ ինչպես սև քյարբար:

Լաճն ի, կլսի թե չէ՝ համան կվազի, կէրթա դեխ պախեզպան, բարև կուտա, բարև կառնի, կբարեկամնա ինոր խետ, կնստի որ խաբար տա:

Պախեզպանը ա̈լ-բե-ա̈լ կխասկնա ինոր միտքը, շոտ կխասնի պախեզից ուր ուզած լավ ձմերուկներից իրեք հատ շատ ճոչն կբերի, կդնի տղի առճև, կասի որ չէլնի թե անճյուր տեղ կտրի ձմերուկները: Թագավորու լաճու սիրտը թըպըլթուն չի տա. հալա ջրի վերեն չհասած՝ ճամխի մեջ տեղ մի խատն կկտրի թե չէ՝ կտիսնա որ մեյ խատ խուրն-խրեղեն աղջիկ տյուս կթռնի, «ճյու՞ր, ճյուր, աման մեյ պուտ ճյուր» կասի, հալա խաբար մեջ բերնին, ջուրը չառած՝ կմեռնի: Քիչ մը տեղ էլ որ կէրթա՝ մեյ խատն էլ կկտրի. էլմ ըսկուն մեկ գեղեցիկ, սիրուն, շողշողուն աղջիկ տյուս կթռնի. էն մեկելի պես «ճյու՞ր, ճյուր» կկանչի, խաբար բերնին մեջ տեղն ի տեղ՝ կյամքի կմեռնի: Լաճը շատ կտրտմի: Կմնա մեկ խատ. կպախի, կէրթա, չյում կխասնի մեյ պաղ աղբըրի ռաստ կուգյա. կնստի ինոր վերեն: Էն մեկ ձմերուկն էլ ըստեղ որ կկտրի՝ համան ձմերուկի միջից տյուս կթռնի աղջիկ մը, աղջիկ մի՛ ասե, խուրն-խրեղեն, լուսնկից, արեգակից պայծառ մի խրիշտակ, «ճյու՞ր, ճյուր»

կասի, ուր կթալի աղբրի ական մեջ. կվւսյվի, կսերսփվի, փյուս կէլնի աղբրի միջից:

Էնփեղ, աղբրի ական վրա, փնկուկ կեր մեկ թազափունկ չինարի ծառ. աղջկան կխանի կնսփյուսյի վեր էն ծառի ծերին, կասի. - Տյու նսփի էսփեղ, ես էրթամ մեր փնից քե խալավ, խազյուսփ բերեմ, քե փանեմ մեր փուն, փյու իմը կէլնես, ես էլ քյոն:

Թազավուրու լաճ աղջկան կթողնի էնփեղ, կէրթա որ ինոր խամար խալավ բիրի, հագույի ու փանի: Աղջիկ մենակ մերկ կմնա էնփեղ, ծառի ծերի վերեն:

Մեկ էլ փիսնաս որ էն դեխեն մեյ խափ Արաբու պռկոշ փառչերը ծեռն կուզյա որ աղբրից ջուր փանի: Կնսփի որ փառչերը լեցույի, կփիսնա ջրի մեջ շառավիղք, շողշողուն մի պափկերք աղբրի ակը բռներ ի: Արաբու պռկոշն ըսկուն կիմնա, որ ուր շառավիղքն ի զարկե ջրի մեջ, կզանի փառչեր կկոփրի ուր հերսից: Ինքն ուր կխպարփանա, կասի. «Որ ես էսւսսկնա խորոփ եմ, էլ ինչու՞ պիփի ջրկիր էլնեմ, ես թագավուրու փղին լայեղ եմ»: Աչքը որ դես ու դեն կշրջի՝ վեր կիրիշկի ծառի ծերին:

Աղջիկն էլ ծառի վիրվից որ կփիսնա պռկոշի արածն ու էլածը՝ կծծղա ինոր վերեն, կասի. - Օ, պռկո՛շ, պռկո՛շ, էփա դյու չես, ես եմ, իմ շառավիղքն ի որ կէրնի ջրի մեջ. խելքդ քե ժողվի, գնա քանիդ:

Արաբու պռկոշ որ կիրիշկա վիրն՝ կփիսնա ծառի ծերին մեյ խուրն-խրեղեն աղջիկմ ի նսփե, չիլ-չոփլախ. մերկ Ադամա մորեն, նսփե դան կվրվնջա:

Արաբու պռկոշը սուփ լայ կդնի վերեն, կաղաչի կպաղափի, կխնդրի որ ուրն էլ առնի խեփ կշփին:

Աղջիկ կասի.

> *- Չինար, չինար, ծառ չինար,*
> *Բոյըդ էրկնույ բարեմբար,*
> *Չինարի ծառ յածրայի,*
> *Արաբու պռկոշն առ բարծրայի:*

Ասփծու խրամանքյով չինարի ծառը կյածրանա, արաբու պռկոշն ի վերեն կէլնի, ծառը կբարծրանա: Պռկոշը կասի. - Քա աղջիկ, դյու քյո ասփված կսիրես, ինչի՞ ես էլե, վեր էսա ծառին մերկ նսփե:

Էն էլ զըմեն ուր գյլխու գյայած և թազավուրու լաճու արածը մեյ մեկ կպապմի ինոր:

Արաբու պռկոշը որ կլսի թե չէ՝ համան կզանի, խեղճ աղջկան ծառից կիսկի փակ՝ մեջ աղբրին:

Աղջիկն ի, ասփծու խրամանքյով կդառնա մի փունջ մանուշակ, կկայնի ջրի երեսին, ինոր անուշ խոփն ի որ աղբրի չորս բոլոր կբռնի, խոփ առնողն մայիլ կմնա:

Թագավուրու լաճը կուգյա կփիսնա որ ի՞նչ. գյո հանջ արաբու պռկոշըմ, սնադիփար աղջիկըմ նստե վեր ծառին: Ինքն ուր կմփմփա. «Զո էսա ի՞նչ, ու՞ր է էն խորոփիկ աղջիկ»:

Կխսրցուցի. - Էսա ի՞նչ բաս ի, ինչի՞ ես էփասկընա սիվցե. պռկներդ էլ էրկնցեր են, ափամներդ փյուս են ինկե:

*- Քյո իփև անչանք լացի, արփսունքս արուն կըփրավ,*
*Անչամ-անչամ ճամբախփ իրիշկացի որ աչքերս չըլվավ.*
*Արև իզարկ, երեսըս սիվցավ,*
*Տավարները իկան վե՛ր աղբըրին, ջուր չին խըմե,*
*Անչամ թու թու արեցի, պռուկներըս թանձրացան,*
*Ափամներըս փյուս էկան, էլա էսասկընա:*

Լայ-լաճ՝ ծառից կէջուցի փակ, արփըշմե խալըվներ կխագյուցի պռկոշին, փունջ մանուշակն էլ ջրից կխանի կզանի գյլոխ, կառնի կփանի ուր փուն:

Արաբու պռկոշի մփքից չէլե փունջ մանուշակ, կասի. - Էփա ծաղիկ ի՞նչ կսնես. թալ գեյփին որ ես գամ քյո խեփ:

Անչամ-անչամ կասի, չյում ծաղիկը թալել կուփա գեյփին: Ծաղիկ որ կփռվի գեյփնով՝ կդառնա մեյ կանաչ բոսփան, թազա-նուբար խիյարը մեջ:

Թագավուրու լաճը կանի որ բոսփանից խիյար մի քյաղի՝ պռկոշը կզսնի ծեռից կիսկի գեյփին: Խիյարը կդառնա սիրուն-սիրուն եղունիկըմ, կթռնի կթռվռա, կուգյա ինոնց առջև փոփիկ-փոփիկ կանի, կճլվլա: Լաճը համան կխասնի, եղունիկ կբռնի, կդնի ուր ծոց: Պռկոշը էլ ինչ մյուքյուն որ կանի՝ ծոցից դյուս չխանե. կէրթան փուն: Եղունկե խամար մեյ խափ կաֆաս շինել կուփա, կդնի մեջ, կկախի ուր սարի քյոշկից:

Տարիմ՝ կմնան թե չէ՝ պռկոշը կմնա փղով: Մփափոխ կէլնի, կասի. - Զիկ եղունկե միս դյուր կուգյա, մորթի որ ես ուփեմ, թե չէ՝ փղեն կընցուցեմ, կմեռնեմ:

Զոռով խաթրով եղունիկ մորթել կուփա: Եղունկե արյունը կցրվի բակի մեջ, կդառնա մեյ թուրա չինարի ծառ, ինոնց բակին խով կանի:

Արաբու պռկոշ փղեն կբերի, կզոռի որ չինարի ծառ կփրեն, ուր փղին օրորոց շինեն: Ճար չկա. չինարի ծառն էլ կուփա կփրել, չյում ինոր փաշեղներն էլ վառել կուփա. ինչըխ կէլնի՝ մեյ կփոր փաշեղ կթռնի, կմփնի ինոնց հայթխի խին լաթերաց մեջ:

Պառավ հայթուխը էփա կփոր փաշեղը կփանի ուրենց փուն. կթալի թոներ կվառի, ինոր մոխրից փյուս կուգյս մեկ խափ պզփիկ մախաթ: Մոխիր որ կխառնեն՝ մախաթը կերևա, կվերցուցեն կթալեն փան պապրխան, էլ չեն իմնա թե ինչ ի: Հայթուխը կէրթա հայ թխելու, պափխընի մախաթը կէլնի խուրն-խրեղեն աղջիկ մը. կէջնի փակ, հ՚ըմեն օր թոնիր կվառի, կիփի, փախփ կավլիլ, թամիգ-թամիզ կլվա կթափի,

էլմ կէլնի մախաթ, կթռնի պապխնի մեյ պուճախ կնստի: Խայթուխը կուգյա տուն, կզարմանա. վառուկ, թխուկ, ավիլուկ սեր-սուփ որ կտիսնա՝ կշվարի, կասի. «Էսա վո՞վ ի, որ զըմեն օր էտասկընա թարթըսմուզ կպախի իմ տուն»: Կէրթա խասռյ-փորձ կանի տրկյներայ մոտեն. ինոնքյ որ կլսեն՝ արմանյք-զարմանյք կէլնեն, շատերն էլ կնախանձեն: Մեկ օր էլ խայթուխը տուն կմնա, գյախտիկ պառ կդնի, կտիսնա, որ ուշիկ-մուշիկ պապխընից բանըմ զնկայ, տակ իջավ: Ի՞նչ... խուրն-խրեղեն, դունյա-գյուզալի խորոտիկ աղջիկըմ: Կվառի, կթխի, տախտ կավիլի կպրծնի, կանի որ էլմ թռնի պապուխան՝ պառավը կխասնի վերեն. իտվանց ինոր ծամերն կբռնի, դաստալամիշ կանի, կասի. - Աղջի՛կ, դյու վո՞վ ես, վիր աղջիկն ես. ասա, էրու՞ն ես, թռչու՞ն ես, ի՞նչ բան ունես մեջ իմ տանպըեղայ:

Աղջիկն ի, կկփսնա որ նազատում չկա՝ կասի. - Մարե՛, մարե՛, ծիկ բան մի՛ անե, թող ես քե աղջիկ, դու ծիկ մեր:

Լավ. հայթուխ պառավը շատ կուրախանա իդոր վերեն: Կուգյա աշուն:

Էն երկրի ադաթն էր, որ թագավուրու լաճը իր ծիանքը կյըրվեր վեր երկրայըց օլամ, տանին մեյ-մեկ խատ պախին: Աղջիկ կկպնի մոր յախեն. կխնդրվի, որ էն ծիերից մեյ խատ էլ իրան պախ տան: Թագավուրու սեիսներ կծծղան վեր պառվուն. չարա չէլնե, ախըր մեյ խատ գյռոտ-մոոտ ծի էլ պառվուն փայ կխանեն:

Պառավը ծինը որ կբերի տուն՝ աղջիկ ըըմեն առավոտուն իրիկուն որ ծեռները կլվանա, կթախթըփի՝ տունջ մանուշակ կբուսնի էն ջրից. ծինը կուտի, օր վեր ավուր լավ կլավանա. ծիու թիմարն, շախն ու պահվն զըմեն ուր ծեռնով կանի, ընկուն որ մեկ-երկու շաբթվա մեջ ծինը կէլնի Արաբստանու ամենից լավ մի ծի. էլ մարդ չճանչնա առջի գյռոտ ծին: Ձիու թարբիեն աղջիկը ուր ծեռնով կանի:

Գյարուն որ կուգյա՝ ամր. կէլնի որ բյություն ծիանք ժողվեն:

Շատերայ պախած ծիանքը խատեր ի, շատերայն էլ ինկեր միսն ու ուսկոռ: Աղջիկը ուր պախած ծիուն սորվեցուցեր ի որ վով որ կուգյա տանելու՝ տայխեց դյուս չէլնի, իլլահ քի ուր տեր (թագավորի տղեն):

Ըղորթ որ խզմաքյարները կուգյան ծինը դյուս խանելու: Նա՛ մյուքյուն. անասունը կխրխնջա, կփռնջա, ոտները կշփի գեյտին, կփռփռա, տայխից դյուս չիգյա: Կկանչեն պառվու աղջկան, ինչ որ իլաճ կանեն՝ ծինը ուր կկտրտի, տեղից չի շարժեր:

Ձի մի՛ ասե, մե խուրն-խրեղեն պատկեր ասա. վիզն ու սաղրինը իկե, իրար ի հասե. ընկուն ի կլավցե, էլե բարեմբար: Խաբար կտանեն թագավուրու լաճուն. ինք կուգյա, ուր աչքով որ կտիսնա՝ զարմանյք կմնա. չխավատա որ էն չափալ ու գյռոտ ծինը էտասկնա խրեղեն ի դառծե:

Կկանչեն աղջկան, որ գյա:

Աղջիկը կուգյա, մեյ խատ որ ծեռնով կզանի վեր մեջքին՝ ծինը

հյուշտ, կթռնի տեղից, կկայնի վեր չորս ոտերայ, կխրխնջա, գեյտրին կտռփի կտրռփի: Աղջիկը ուր ձեռներ կլվա ինոր առջև, փունջ մանուշակ կբուսնի, ծինը խտխտալով մի քիչ կարածա: Էլմ՚էլ ձեռը որ կզանի վեր սաղրուն՝ ծինը ականջները կսրի: Կասի. - Թերեմաշ, թե օֆա տե՞րդ ես իկե. վեր էլի կայնի:

Ձինը համան տեղից վեր-վեր կթռվռա, կխրխնջա, վիզը կօլրկտի:

Թագավուրու լաճուն աղջկա էսա խաբրները մառախ կէլնի, որ աղջիկըն ասայ անասունին, թե՝ օֆա տերդ ես իկե: Ախըր ծին կկապեն արծթե չըմբուլներով ու կտանեն: Կմնա որ արաբու պռկոշը երկու ոտը կդնի մեջ միյ սոլին. կասի. իմ տղի ուրուրոյի ծածկոյն մարգրտե շար պիտի լինի: Ուր որ կիյնեն՝ ինոր ուզածը մարդ չկա որ շարի. էլմ՚էլ կէրթան կիյնեն պառավ հայթուխին, ուր աղջկան ոտ ձեռը որ շարի:

Պառվու աղջիկը կբերեն կդնեն շուշաբանդ էօդեն. թագավուրու լաճը գյախտիկ մտեր ի մաբեյնի մուսանդարի մեջ, որ էն տեղից ականջ անի, տիսնա թե աղջիկը ի՞նչ պիտի անի ու ասի:

Աղջիկը մարգյրիտ կլցի առջև, արփշմե թելերը կօլորի, շողշողուն մատներով որ կշարի՝ խետն էլ անուշ-անուշ խաղեր կասի. ուր գլխով գյայածները զըմեն խաղով կասի.-

*Մարգըյրիտ, դե շար, դե շար, դե շար,*
*Տյու ես Շամ ու Հալբու պաշար,*
*Թագավուրու տըղի քյուն տար.*
*Թագավուրու լաճուն պիտեր պաշար:*
*Ես պախեզպնի մեկ խատ աղջիկ ի,*
*Զըմերուկի մեջից տյուս իկեր ի.*
*Թագավուրու լաճու կսմաթն ի,*
*Իմ քյորերայ պզտիկն ի:*
*Արաբու պռկոշն աղբյուր էկավ,*
*Իմ շառավիղք աղբյուրի մեջ տեսավ,*
*Զիկ խաբեց, ծառից տակ բերեց,*
*Զիկ մեջ աղբրին գըլորեց:*
*Ես էլա փունջ մանուշակ վեր ջըրին.*
*Թագավուրու լաճ ձիկ դրեց ուր մեջքին,*
*Արաբու պռկոշն ընցուց իմ տեղըն,*
*Աստված ավլտեր ուր տուն ու տեղըն:*
*Մարգըյրիտ, դե շար, դե շար, Հալբու պաշար,*
*Աստված, տյու ձիկ արա մեկ ճար:*

Աղջիկը թե մեկ ուր ձեռներով կշարեր մարգյրիտները, տասնմեկ էլ իրանց-իրանց կշարվին. ընկուն որ ուր գյլխով գյայածն զըմեն էլ խաղով ու տաղով կասի կվերջացուցի:

Էն գյահ, որ արաբու պռկոշի անուն կուտա՝ թագավուրու լաճու

մազերը կփիզանան, արփսունքն ուր կխեղդի: Էլ չկանա խամբերե. համան մուսանդարից ուր կթալի փակ, կմփնի աղջկա մոփ, կգյրկի ինոր, կասի. - Վա՛յ աղջիկ, ես քե մեղա: Մկա իմցա, որ ես շափ ու շափ խաբվեր եմ. արաբու պոկոշը ծիկ խելքից մփքից խաներ ի: Մեղա՛, մեղա՛ ասփծու: Ցյու էլ էսփուց դեն իմ կյանքն ու խոգյին ես. էլ քյանի որ փյու ես կենով կենդանի ենք՝ մեկզմեկու փերն ենք:

Թագավուրու լաճը էլ արա-մարա չիպա. ամր կանի ուր մարդերանց. էն սխաթին արաբու պոկոշն էլ, ուր սև փալեն էլ թագավուրու սարից կխանեն փյուս, կկապեն կափաղած ծիանքներաց պոչերից, կքշեն սաբեր ու չոլեր:

Ձիերը սարե-սար, քյարե-քյար կզանեն կփշրեն, իրիկուն մեյ ճող ծամ կբերեն փուն, նշանց կուփան:

Ասփված նոր կուփա պախեզքնի աղջկան:

Քյառսուն օր, գիշեր ու ցորեկ, աշխրաժողով կանեն, խարսնիս կանեն, իրանց սրփի մուրազին կխասնեն:

Էրկնուց իրեյք ոսկի խնձոր իջավ. մեյն ասողաց, մեյն էլ լսողաց, մեյն էլ ականջ արողաց: